


**1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ  
(սպառողական շուկա)**

**ՀՀ սպառողական շուկան (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը) 2000թ. հունվար – հոկտեմբերին**

	2000թ հունվար-հոկտեմբերի փաստացի ծավալը, մլն. դրամ	2000թ.հունվար-հոկտեմբերը տոկոսներով 1999թ հունվար-հոկտեմբերի նկատմամբ	Տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ	
			2000թ. հունվար-հոկտեմբեր	1999թ. հունվար-հոկտեմբեր
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը այդ թվում	444636.4	106.3	100	100
մանրածախ ապրանքաշրջանառություն	301945.4	107.1	67.9	67.8
բնակչությանը մատուցված ծառայություններ	142691.0	103.5	32.1	32.2

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները (տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)**



Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2000թ. հունվար-հոկտեմբերին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով 6.3 տոկոս) և դրանում ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը 0.1 տոկոսային կետով ու համամասնորեն նվազել է բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը: 2000թ հոկտեմբերին սպառողական շուկայի ծավալի աճի տեմպը սեպտեմբերի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 106.0 տոկոս:

**Մանրածախ առևտուր**

2000թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է 301.9 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 7.1 տոկոսով (իսկ 2000թ հոկտեմբերին սեպտեմբեր ամսվա համեմատությամբ


մանրածախ ապրանքաշրջանառության աճի տեմպը, համադրելի գներով, կազմել է 104.3%):

**ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-հոկտեմբերին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ
Ընդամենը	301945.4	100
այդ թվում՝		
խանութներ	125836.2	41.7
հանրային սննդի օբյեկտներ	2809.4	0.9
սպառողական ապրանքների շուկաներ (տոնավաճառներ)	85739.6	28.4
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	18297.2	6.1
կրպակներ (տաղավարներ)	69263.0	22.9

**Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքը ըստ ձևավորման աղբյուրների, 2000թ. հունվար-հոկտեմբերին**

(տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)



2000թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է կազմել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) և կրպակներում (տաղավարներում) իրականացվող առևտուրը՝ 93.0 տոկոս (280838.8 մլն. դրամ), իսկ 7.0 տոկոսը՝ (21106.6 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի օբյեկտներում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտրին: Հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Գործող սպառողական ապրանքների շուկաներից (տոնավաճառներից) ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա 2000թ. հունվար-հոկտեմբերին ապրանքաշրջանառության ծավալը, փաստացի գներով, կազմել է 85739.6 մլն. դրամ:


**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2000թ.հունվար-հոկտեմբերին**

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ

Արարատ	534.9	16.2	83.8
Արմավիր	1169.4	65.1	34.9
Գեղարքունիք	1261.7	19.1	80.9
Լոռի	1829.3	36.0	64.0
Կոտայք	1761.2	42.8	57.2
Շիրակ	2070.8	2.9	97.1
Սյունիք	48.2	-	100.0
Տավուշ	1845.3	64.0	36.0
ք. Երևան	75218.8	14.4	85.6
Ընդամենը հանրապետությունում	85739.6	17.0	83.0

Հարկ է նշել, որ հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում 2000թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 83.0 տոկոս, իսկ պարենային ապրանքներինը՝ 17.0 տոկոս:

**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)**  
(տոկոսով ընդհանուրի նկատմամբ)



Ըստ գծապատկերի, 2000թ. հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 0.3 տոկոսային կետով:

2000թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 25057.6 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 60 օր:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-հոկտեմբերին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 6.1 տոկոսը կամ 18297.2<sup>1</sup> մլն. դրամը:

<sup>1</sup> Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

*Բնակչությանը մատուցված ծառայություններ*

2000թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում, ըստ արտադրական և սպասարկման ոլորտի 3300 առևտրային կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկման, բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է 142691.0 մլն. դրամ, որը 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ համադրելի գներով կազմել է 103.5%: Ծառայությունների ինդեքսն 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 101.5%: Ծառայությունների սակագներն աճել են 1.5%-ով, այդ թվում՝ կրթության՝ 14.5%-ով, մշակույթի՝ 3.9%-ով, առողջարանների և հանգստյան տների՝ 2.9%-ով, բժշկական՝ 3.3%-ով, օդային տրանսպորտի՝ 2.4%-ով, իրավական և բանկային՝ 1.6%-ով կենցաղային՝ 0.6%-ով, մարդատար տրանսպորտի՝ 0.4%-ով: Ծառայությունների մնացած տեսակների գծով նկատվում է սակագների նվազում կամ նույն մակարդակի պահպանում:

2000թ. հոկտեմբերին նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ ծառայությունների ծավալը համադրելի գներով կազմել է 101.1%, իսկ 2000թ. հոկտեմբերին հաշվետու տարվա սեպտեմբերի նկատմամբ՝ 109.7%:

2000թ. հունվար-հոկտեմբերին ծառայությունների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունեն հետևյալ ծառայությունները. մարդատար տրանսպորտի (ավտոմոբիլային և օդային)՝ 32.1%, այդ թվում՝ օդային տրանսպորտի բաժինը կազմել է 27.3%, բնակարանային-կոմունալ տնտեսության՝ 31.7%, այդ թվում բնակչությանն էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների բաժինը՝ կազմել է 21.6%, կապի՝ 14.2%, կրթության համակարգի՝ 6.5%, մշակույթի՝ 3.6%, այդ թվում վիճակախաղերի կազմակերպման ծառայությունների բաժինը՝ 2.9%, բժշկական բնույթի՝ 2.9%, իրավական և բանկային՝ 1.7%, կենցաղային՝ 1.4% և մնացած ծառայությունների բաժինը՝ 5.9% :

Այլ ծառայությունների տեսակարար կշիռը կազմել է 5.6%: 2000թ. հունվար-հոկտեմբերին 41 խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալներով, ծառայությունների ծավալը կազմել է 634.7 մլն. դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 0.4%-ը: